

ժամ վակակալ և սպասաւոր սուրբ դամ-
բարտի Յակոբայ առաքելոյն:

Երաժշտապետ Վահրամին իր միջավայ-
րում յայտնի է զարձել նաև որպես լաւա-
գոյն մանկավարժ: Նու կրթել է և դաս-
միաբակել երաժշտասէր մի ամբողջ սե-
րունդ և նրա հոգում վառ պահել հայ ե-
կեղեցական և աշխարհիկ երաժշտութեան
ուրը:

1421 թուականին գրուած Պիրք հարց-
մանց ձեռագրի յիշատակարանն ու շագրաւ
է նաև այն տեսակէտից, որ ցայտուն գոյ-
ներով զծել է ընտանիքի տիպար և օրի-
նակիլի հայր հանդիսացող երաժշտապետի
ընտանեկան կեանքի պատկերը, ուր տես-
նում էք վաստակաւոր քահանայի տիրու-
րուհին՝ «բարիհամեստ» Եղները, նազելի
դուստրը՝ տիկ. Մարիուն, փեսան՝ պարոն
Թորոսը և սարամիտ, մաքուր և անբիծ»
սարկաւոգ Հեթում որդին, որ 1421 թուա-
կանին, 18 տարեկան հասակում, վախճան-
ուել է: Նրա վաղաժամ մահը խոր վիշտ,
կոկիծ և անփարատելիս տրտութիւն է
պատճառել թէ՛ ծնողներին և թէ՛ բոլոր
հարազատներին: Ահա յիշատակարանի վկա-
յութիւնը, ալրդ, աղաչեմ զծեզ զամենեա-
նան . . . յիշեցէք ի յերկնաթաիչ աղաւիժս
ձեր զգերոյզքեալ քահանայն զվահամեն,
և զրարիհամեստ զուգակիցն իւր զտիկին
Եղներն, և զիւր նազելի գուստրն՝ տիկին
Մարիունն, և զիեսայն իւր՝ զպարոն Թո-
րոսն, և զաստուածապարզե զաւակեն իւր:
Այլև զհանգուցեալ սիրուն որդեակն իւր-
եանց, զսրամիտ, զմաքուր և զամբիծ
սարկավաքն, որոյ անուն յօրջորջիւր Հե-
թում, քանզի յայում ամի, որ է թվական
հայոց 92 (870 + 551 = 1421) ամ, ի յու-
նիս ամսոյ ԺԱ. (11) և պատկեր աւուրին
չորիքշարթի, փոխեցաւ առ Քրիստոս յօրին
ամենացուն և զնաց տարաժամ յաշխարհէս,

զի էր ամաց Ժ. և Բ. (18)ից և եթող մեծ
ուուզ և անփարատելի տրտութիւն իւր
ծնողացն և ամենայն զարմիցն, ևս առա-
ւել մեզ, քանզի ի մանկութենէ ի վեր
սնուցել էաք գորովալիր աղետիւք:

Թէ ո՞ր թուականին է վախճանուել
վաստակաւոր երաժշտապետը և ո՞ր պատ-
մական վանքի կամարների ներքոյ ին հանգ-
չում նրա աճիւնները ստոյզ տեղեկութիւն-
ներ չկան: Պարզ է միայն այն, որ նա

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ՍԻՐԱՀԱՑԵԱԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱԸՆ. — Սիրահայեաց Ա.
Աստուածածնի վանքը կը գտնուէր Զնքուչ
կամ Եկեղեցու աւանին մօտ, Զերմուկ գա-
ւառին մէջ (Դուկաս Վ.րդ. Խնձրձեան, Աշ-
խարհագրութիւն, Ասիա, Հատոր Ա., Վե-
նիամիկ, 1806, էջ 239): Կոկիկ և սիրուն
չէնք մըն էր, այգիներով և ձառերով շըր-
ջապատուած (Պ. Վ.րդ. Սրուանձտեանց,
Թորոս Ազրար, Մասն Բ., Կ. Պոլիս, 1884,
էջ 187):

ՊԱՏՄԱԿԱԸՆ. — Սիրահայեաց Ա. Աս-
տուածածին վանքին հիմնարկութեան, ա-
ռաջնորդներուն և անոնց գործունէութեան
մասին կան հետեւեալ տեղեկութիւնները:

1. — Պօլոս Վ.րդ. Հասառանցի (1561-
ֆ 1593). — Առ 1561ին Ա. Աստուածածնի
վաղակառոյց մատրան կից ուխտ և սթոռ
կը հաստատէ (Թ. Ազրար, Բ., էջ 457-8):

Այս ժամանակ Եկեղեցուի մէջ իրբն
զրիչ և ծաղկող յիշատակելի է Գառպար
Բահանան, որուն օրինակած զիրքերէն ծա-
նօթ են 1. — Նարական, 1580 (Թ. Ազրար,
Բ., էջ 384): 2. — Աւետարան, (նոյն, էջ
453): 3. — Նարական, 1586 (Ծուցակ Զեռ.
Էջմիածնի, 1863, Թիֆլիզ, թիւ 1587, էջ
176): 4. — Եղանակ = Նարակինց, 1591
(Արքայի Ամենա, Ցուցակ Զեռ. Եւր. Մասն.
Հաւաքումներու, 1950, էջ 70):

2. — Մարտիրոս Վ.րդ. Շենքուցի (1593

ապրել է մինչև խորին ծերութիւնը և իր
գեղարուեստական գործունէութեան ըն-
թացքում հայ երաժշտական արուեստի
ջահը միշտ վառ է պահել. միաժամանակ
նպաստել է նոր սերնդի երաժշտութեան
կրթութեան վեհ գործին: Այդ էական յատ-
կանիչներով էլ նա առանձնայատուկ տեղ է
զրտում հայ երաժշտական արուեստի
պատմութեան մէջ:

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

(Եարունակելի՝ 13)

- Փ. 1632). — Աշակերտն էր Պետրոս Կարկառցիի, որմէ ստացած է եպիսկոպոսական ձեռնադրութիւն (Ցուցակ Զեռ. Ս. Յակոբանց, Բ. Հատոր, 1953, էջ 170): Վկայուած է իրբու «այր փիլիսոփայ և քաջ քարտուղար, որոյ գոն ծրեալ մատանց նուրին յոլով գրեանք ի սուրբ վանքու և յեկեղեցին որ ի Շէնքուշ» (Թ. Աղբար, Բ., էջ 458): Իր աշակերտներէն կը յիշուին երեք հոգի (Նոյն, էջ 484): Իր ձեռքի արդիւնքներէն յիշուած է Լամբրոնացւոյ Պատարագի Մեկունթիւնը, օրինակուած 1613 թուին (Նոյն, էջ 484-6):

3. — Ցովինաննես Վ.րդ. Շենքոււցի (1632

- Փ. 1643). — Կը յաջորդէ իր ուսուցիչ Մարտիրոս Վարդապետին: Իր սուաջորդութեան ըրջանին: Իր ուսումնակից Եղիազար Հոռմէլլայեցիի ձեռնադրութեամբ նոր ի նորոյ կը չինուի վանքին պարիսպը (Թ. Աղբար, Բ., էջ 458): Իր աշակերտներէն կը յիշուին հինգ հոգի (Նոյն, էջ 464 և 484):

4. — Մարկոս Վ.րդ. Հացոււցի (Շենքոււցի, 1643 - Փ. 1679). — Մարկոս Վարդապետի ժաման կը վկայուի թէ «ունի բազում յիշատակ ի սուրբ վանքու և ի Շէնքուշ, և Գանձտեար մի գրեալ ձեռամբ իւրով» (Թ. Աղբար, Բ., էջ 458): Շէնքուշի Դաստան մէջ իր աշակերտն է եղած Մինա Վ.րդ. Ամդեցի, որ 1674ին կ'եթայ Շէնքուշ և իր բարունիէն կը ստանայ Մեկնութիւն Պուկասու՝ իգնատիոս Վարդապետի (Միւրմէեան, Ցուցակ Զեռ. Երուսաղէմի, Ա. Հատոր, Վենետիկ, 1948, էջ 318):

5. — Մինա Վ.րդ. Ամդեցի (1679-1701). — Մինաս Վ.րդ. Ամդեցի զաւակն էր Առաքելի և Հոլիխոմէի և օի տղայութեան բերեալ և որդեգիր էր տուեալ ումեմն Շէնքուշի Խաչատուրի» (Թ. Աղբար, Բ., էջ 458): Իր ուսումը կը ստանայ Շէնքուշի Դաստան մէջ, Մարկոս Վարդապետի ձեռքին տակ: Երուսաղէմի մէջ, 1666ին, եպիսկոպոս կը ձեռնադրուի Եղիազար Կութողիկոսէն: Երկար տարիներ նուրիակի պաշտօն վարած է, իր վրայ պահելով վանահայրութեան պաշտօնը և յաճախ հանդիպելով և ժամանակ մը մեալով Շէնքուշի վանքին մէջ, ինչպէս 1680 Հոկտ., 1684 Ցունուար 30 - Փետրուար 18, 1684 Հոկտեմբեր 18 - 1685 Մայիս 6, 1695 Օգոստ 24-31, և Նոյեմբ. 8-25 (Օրագրութիւն, Ե.

Զ. Քէօմիւրճեանի, էջ ձլ.ջ, ձլ.թ, ձիթ.թ, Հմմտ. Արայոյանեան, Պատմ. Եւղոկիոյ Հայոց, էջ 646 և 710):

Իր Օրագրութիւնը (1680-1704) մանրատառ, համառօտախօս և դժուարլնթեանլի ձեռագիր մը, կը մեայ անտիպ (Ցեռ. Ս. Յ. թ. 1316): Առոր համառօտ մէկ ամփափումը հրատարակած է Մեսրոպ Մըք. Նշանեան (Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի, 1939, Երուսաղէմ, էջ ձլ.ե-ձի.թ):

Մինաս Եպո. Ամդեցի եղած է նաև պատրիարք Երուսաղէմի (1698 - Փ. 1704). — (Մ. Եպո. Աղաւնունի, Միաբանք և Այցելուք, 1929, Երուսաղէմ, էջ 286-7):

Այդ հանգամանքով ան 1701 տարւոյ Մեպտեմբերին կը հասնի Երուսաղէմ և իր եղբօրորդի Շէնքուշի Ցովհաննէս վարդապետին Ծայրագոյն Վարդապետութեան գաւագան տալով կը զրկէ Շէնքուշի վանքը, որ կառավարէ զայն իրեն փոխանորդաբար (Թ. Աղբար, Բ., էջ 459):

6. — Ցովինաննես Վ.րդ. Շենքոււցի (1702 - Փ. 1723). — Եղբօրորդի և աշակերտ Մինաս Ամդեցիի: Իր ըրջաննէն կայ հետեւալ յիշատակազգութիւնը, 1708 Փետր. 5, ըր. թուականով. «Ես Շէնքուշացի մեղապարտ և անարժան Ցովհաննէս էրեցո եկի ի Հապուման. վասն Ս. Աստուածածնայ շարակնուն համար. Աներէկցիք հարսնառում են էկած, գեղացիքն ամէն խաղալ են զնացած, Գ. աւր կհցայ, մէկ մի չէկաւ մաւսա ...» (Թ. Աղբար, Բ., էջ 456):

7. — Եղիազար Վ.րդ. Աւիսաւցի (Աւեսուցի, 1723-1725). — Երկու տարի կը նստի և չի կրնար կառավարել աթոռը (Թ. Աղբար, Բ., էջ 459):

8. — Սեփիանս Վ.րդ. Կիւրինցի (1725 - 1737). — Սա կը նստի 12 տարի և ապա վանքէն կը փախչի առանց ուեկ օգուտ ունենալու (Թ. Աղբար, Բ., էջ 459):

9. — Նիկոլայոս Եպո. Շենքոււցի (1737 - Փ. 1756). — «Շէնքուշի Նիկոլայոս Վարդապետն Բաղդապաւլոնց տանէն՝ յաջորդէ զաթոռն Ս. Աստուածածնի մինչ ժլ. ամ, այր. ճգնազգեաց, ոնեալ յանապատի, որ ունի յիշատակ սուրբ վանքին մեծ աւտան առաջնորդաբանն և զուռքն Երկաթիր: Իր աշակերտն է եղած Գասպար Վ.րդ. Շէնքուշի» (Թ. Աղբար, Բ., էջ 459-460):

10. — Գասպար Արք. Շենքոււցի (1756

- Տ 1788). — Սա «օրպէս ջահ փայլեալ վարուք»: որ ունի բազում երախտիք սրբոյ տանս: իր արդիւնաւէս կեսնքին և շինարարական գործերուն մասին բաւական տեղեկութիւններ հասած են մեզի: Այսպէս:

1726ին կու գայ Ս. Աստուածածնի վանքը:

1737ին արեղայ կը ձեռնադրուի Նիկոլ զու եպիսկոպոսէն (Թ. Աղքար, Բ., էջ 466):

1746ին գաւազան կը ստանայ՝ գարձեալ Նիկոլս եպիսկոպոսէն:

1749ին Երուսաղէմ ուխտի կու գայ:

1753ին կը շինէ Զնքուչի վանքին տաճարին գմբէթը:

1754ին վանքին ջրաղացը կը շինէ քարուի կիր: Նոյն տարին կ'երթայ Ս. Կարապետ:

1756ին կը կոչուի վանքի առաջնորդութեան պաշտօնին:

1758ին ստատիկ սով կ'ըլլայ և Զնքուչի մէջ անօթութենէ կը մեռնին 400 հայեր: ու ամիս Զնքուչայ եկեղեցին ոչ կանթեղ վառաւ, ոչ ժամկոչ ելաւ, իրբ ծովու նման կու ծփայր երկիրն գառն մեղաց մերոց: Յայսմ թվին ներքին Ազիշոյ եկեղեցին այլ այրեցաւ, որ մէկ հատ քար կամ փայտ չմեաց» (Թ. Աղքար, Բ., էջ 468):

1763ին նորոգեց Վանքին արեելեան կողմի պարիսպը:

1764ին Էջմիածնի երթալով հպիսկոպոս կը ձեռնադրուի Ալմէսն Կաթողիկոսէն:

1771ին աղքիւր մը շինել կու տայ Ս. Աստուածածին վանքին զիմաց, ծախսելով հազար դրչ.:

1778. — «Բազում չափուրկայ և կարկուտ էկաւ. կարի գժուար սով սաստիկ եղաւ...» (Թ. Աղքար, Բ., էջ 468):

1788ին կը վախճանի բազմարդիւն Առաջնորդ Գասպար Արքեպիսկոպոսը. Նոյն տարին կը մեռնի նաև իր գործակիցը՝ Պետրոս Վարդապետ (Թ. Աղքար, Բ., էջ 460):

11. — Յովհաննես Վրդ. Շենքուցի (1788 - Տ 1792). — Երբ Գասպար Արք. կը վախճանի ար նոյն աւուր առեալ իշխանացն Ենքուչայ և Ազիշոյ՝ տանին յԱթուն Քարձահայեաց Ս. Աստուածածնի Վանք Արդնոյ, և անդ կանու գաւազան ծայրադոյն վանքը կ'այցելէ Քարեզին Վրդ. Արուանձտեանց և համառոտակի կը ցուցակագրէ վանքին 43 ձեռագիրները (նոյն, էջ 452):

1788. — «Նորոգեաց բազում աւտաշիւք զուրբը վանքն ուխտաւորացն»:

1790. — ՅԲերաւ աղքիւրն ի մէջ վանքին և եղեւ շինումն աւտային, և էաու ջրադացն յիշատակ սուրբ վանքին» (նոյն, էջ 461):

1791ին Ս. Էջմիածնի կ'երթայ և Ղուկաս Կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի:

1792 Մեպտ. 8ին կը վախճանի Յովհաննէս Եպոս. և կը թաղուի ի Ենքուչ, Ս. Կարապետ եկեղեցւոյ հովանիին տակ (նոյն, անդ):

12. — Կարապիտ Վարդապիտ, 1792ին կը յաջորդէ Յովհաննէս եպիսկոպոսին (նոյն, էջ 451):

Այդ դարուն վերջը կամ յաջորդին սկիզբը Զնքուչ աւանը ունէր իրը 400 տուն հայ և իրը 250 տուն տաճիկ բնակիչ (Ինձինեան, Աշխարհագրութիւն, Ասիա, Հաւատոր Ա., էջ 240):

13. — Բաղդասար Վրդ. Տիգրանակերցի (1841-1880). — Սա «40 տարի շարունակ պաշտօն վարած է. իր օրով շինել տուած է Վանքին Ս. Տաճարն և այլ շէնքերը, Զնքուչայ և Ազիշոյ եկեղեցիները, քարուկիր և վայելակերտ. ունեցած է շատ մը երախտիք, և իւր բարեվարութեամբ ու բարեգործութեամբ սիրելի եղած է երկիր Եհսերուն, Թրքաց, Քրդաց, և Հայոց, որք առ հասարակ Մեծ Դեսէ կը կոչէին զինքն, և Հայք ամէն պատարազին կը յիշեն նորաւ անունը ի կարգի Հանգուցեալ բարունապետաց և շինողաց սուրբ եկեղեցւոյ, իւր գերեզմանին ալ ուխտի կ'երթան ...» (Թ. Աղքար, Բ., էջ 188): Հոս խնամքով պահպանուած մատեաններ շատ կային. ձեռագիրներու թիւն էր 43 (նոյն, էջ 452):

14. — Մինա Վրդ. Մալսրիացի (1884). — Իր առաջնորդութեան ժամանակ Սիրահայեաց Ս. Աստուածածնի վանքը կ'այցելէ Քարեզին Վրդ. Արուանձտեանց և համառոտակի կը ցուցակագրէ վանքին 43 ձեռագիրները (նոյն, էջ 187 և 452-486):

Այս թուականին Զնքուչ ունէր մէկ եկեղեցի, Ս. Կարապետ, վարժարան մը 125 աշակերտներով, և 500 տուն հայ (նոյն, էջ 190):

ՄԵԾՈԿՈՒԹԱՑԲՆ. — Ժէ. գարուն սկիզբ-ները հաստատուած կը թուի ըլլու Գասա-սուն մը, Ալրահայեաց վանքին մէջ, Շէն-քուշցի Մարտիրոս Վարդապետի միջոցաւ, որ աշակերտն էր եղած Պետրոս Կարկառեցի Դպրատան՝ Ա. Տիմոֆէսոսի վանքին մէջ (Հմմատ). Կրւէսէրեան Բարգէն Ա. Կթզ., Պատմ. Կաթ. Կիլիկիոյ, 1939, Անթիլիսու էջ 245- և 252): Այս Դաստանն պատկերը իր գիտաւոր դիմերով կը ներկայացնաւ այսպէս:

Ա. — Մարտիրոս Վրդ. Շէնքուշցի (1593 - ք. 1632). — Իր աշակերտներէն ծանօթ են հետեւելները:

1. — Յովիաննես Վրդ. Զենուցի, որ տեսանք վերը:

2. — Արիստոկես Խարբերդցի, որդի Կիրակոս Քահանացի: Իր ուսուցչէն գուազանի իշխանութիւն ստացած է 1618ին Ա. Նշան հեկեղեցւոյ մէջ:

1628ին գացած է Կ. Պոլիս և հան օժանդակած է ժաղովուրդին որպէսզի կարենան ձեռք բերել Պալաթի Ա. Հրեշտակապետաց եկեղեցին. — Ազգապատում, յօդ. 1640: Վրդ. Դարանազցի, Ժամանակապետիւն, էջ 187-9:

Լեհահայոց Նիկոլ Եպիսկոպոսին խնդրին մէջ պահ մը խառնուած է Արիստոկէս Վրդ. երր կը գտնուէր Բուրսայի մէջ, և վատ խորհրդատուի դեր մը կատարած է, որովհետեւ այս Արիստոկէս վարդապետու և այն կեսարացի Գրիգոր վարդապետն ունիին ընդ միմեանս ոխս նախանձու յոյժ սաստիկ: (Ա. Դաւրիթեցի, էջ 370-371):

Ունի երկար տաղ մը սկան Շռազատկին Յունիք, ծժեն տուն, գրուած 1634ին, «Արիստոկէս խնդրով բանիս սկզբնաւորութեամբ: Ա. Յ. Թ. 1456 ձեռագրէն առնըւած քանի մը կարեոր տողեր կարելի է տեսնել՝ Հասկ, 1953, էջ 172:»

3. — Սիմեոն դիտողն, իր մասին ուրիշ տեղեկութիւն չունինք:

Բ. — Յովիաննես Վրդ. Զնորուցի (1632 - ք. 1643). — Իր օրով Դաստանունը կը շարունակէ արդիւնաւորուիլ: Իր աշակերտներէն յիշուած են հետեւելները:

1. — Աւտուածատուր Վրդ. Տարոնցի, ապա պարք. Երուսաղէմի (1645 - ք. 1671):

2. — Խաչատուր Վրդ. Աղիեցի կամ Զենուցի, ծնողքը Տէր Բարսեղ և Դիմաթ:

Աստուածատուր պատրիարքին հետ Պոլիս երթագուն առթիւ ՌԴ. (= 1649)ին կը գնէ Աստուածաշունչ մը և ծաղկել տալով. Դազարս անուն նկարչին, կը նուիրէ Երուսաղէմի Ա. Յակոբեանց վանքին (Զեռ. Ա. Յ. Թ. 1927: Հմմատ. Միաբանք, էջ 175): Իրրեն Երուսաղէմի միաբանն կը մասնակցի Փիլիպոս Կաթողիկոսի 1651ին Երուսաղէմի մէջ զումարած ժողովին (Օքտանեան, Ազգապատում, էջ 2457): Հաւանարար ինքն ըլլայ Երուսաղէմի վէքի եաչատուր Վարդապետը, որ 1677ին Խոստագուի մէջ կը զնէ Գործք Առաքելոցի Մեկնութիւն մը (Յուցակ Զեռ. Ա. Յակոբեանց, Գ. Հատոր, 1954, էջ 238):

3. — Կիրակոս Վրդ. Պուլանըլիսի, ուրիշ ծանօթաւթիւն չունինք իր մասին:

4. — Յովիազար Վրդ. Հառուկլանցի, ապա Պատրիարք Երուսաղէմի և Կաթողիկոս Էջմիածնի:

5. — Մարկոս Վրդ. Զենուցի, որ յիշուած է վերը:

Գ. — Մարկոս Վրդ. Շէնքուշցի (1643 - ք. 1679) կոչուած նաև Հայուսյի, ծանօթէ մէկ աշակերտը միայն ծանօթ է որ իր կորցին կը գտնուայ առաջնորդ Զնքուշի վանքին, այն է Յովիաննես Զենուցի (1702 - ք. 1723):

Այսպէս Ժէ. զարու մտաւորական վերաբարթումի ըրջանին Շէնքուշի վանքին Դաստանուն ալ կը կատարէ յիշատակելի դեր մը, տալով քանի մը նշանաւոր դէմքեր իրրեն պատրիարք և Կաթողիկոս, որոնք մէկ. զարու մեր ազգային եկեղեցական կեանքին մէջ ուշագրաւ եղան իրենց զործունէութեամբ:

Դ. ԵՊԱ. ՄԱԿԱԿԱՆ

